Ավետիք Իսահակյան

Ա՛խ, սիրտս անմեր ու սիրտս անմեր

Ա՛խ, սիրտս անմեր ու սիրտս անմեր
Որբուկի նման,
Զօր – գիշեր կուլա, քուն – դադար չունի.
Ու ինչպես մորը, հարազատ մո՞րը, -
Սիրուս կրկանչե,
Որ գիրկըն ընկնի, ծով – կարոտն առնի…

Սերս մեռեր է ու կանանչ մեռեր,
Է՛լ հետ չի դառնա, -
Իմ խե՛ղճ, իմ ո՛րբ սիրտ, ինչքա՞ն մորմոքիս,
Է՛լ քեզ գուրգուրող ու քեզ գուրգուրող
Ազիզ մեր չըկա,
Ու նանիկ ասող, ար անո՞ւշ քնիս…

Ա՞խ, առանց ծաղկի ու առանց վարդի
Իմ գարունն անցավ,
Ու խեղճ բլբուլս շա՞տ կանուխ լռեց.
Էն սև՞ ուրուրը ու սև՞ ուրուրը
Չոր գլխովըս անցավ,
Բլբուլըս անհուն թևերը թափեց…

Է՞խ, իմ դարաքաշ ու իմ դարաքաշ
Չոր գլուխս առնեմ,

Գա՛մ թափառելու ափերդ, Արա՛զ.
Քարե – արցունքըս
Ջրերուդ խառնեմ,
Լա՛մ թափառելով ափերըդ, Արա՛զ…

1903